



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
**ՆԱԽԱԳԱՀ**

STATE REVENUE COMMITTEE OF THE GOVERNMENT OF THE  
REPUBLIC OF ARMENIA  
**CHAIRMAN**

0015, ք. Երևան, Մ. Խորենացու 3,7, Հեռ.՝ 59 44 01, 59 46 01

3,7 M. Khorenatsi Str., 0015, Yerevan Tel.: 59 44 01, 59 46 01

№ 2/342-Ա

«13» հունիսի 2016թ.

**Հ Ր Ա Մ Ա Ն**

**Վ.ԹԱՆԳՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Հարկային ծառայության մասին,, ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի թիվ 224-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 14-րդ ենթակետով և հիմք ընդունելով հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 6-ի թիվ 16/2016 եզրակացությունը

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի Գորիսի տարածքային հարկային տեսչության հարկային հսկողության բաժնի հարկային տեսուչ Վաչե Թանգյանին հայտարարել „ԳՐԱՎՈՐ ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ,,:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի անձնակազմի կառավարման վարչության անձնակազմի հաշվառման բաժնի պետ Ա.Վարդանյանին.  
- սույն հրամանը ծանոթացնել ողջ անձնակազմին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՀՈՎՍԵՓՅԱՆ